



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

*վերգետնյա էթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և
ռադիոընկերությունների կողմից 2018թ. դեկտեմբերի 9-ի Հայաստանի
Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական
քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ`
ըստ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
մշտաադիտարկման արդյունքների*

Երևան 2018

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ընտրական օրենսգրքի» 20-րդ հոդվածի 4-րդ մասով 2018թ. նոյեմբերի 6-ին որոշել և հրապարակել է 2018թ. դեկտեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության մասնակից կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության կողմից տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը:

ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի և դրա սակագնի վերաբերյալ մինչև 2018թ. նոյեմբերի 10-ը հայտարարություն են տարածել նաև վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող տարբեր սփռում ունեցող թվային և տեղական 26 հեռուստաընկերություն և 13 ռադիոընկերություն, մասնավորապես.

- հանրապետական սփռում ունեցող 6 հեռուստաընկերություն (Առաջին Ալիք, Կենտրոն, Հ2, Շանթ, Արմենիա ԹԻՎԻ, Երկիր Մեդիա) և 3 ռադիոընկերություն (Առաջին ծրագիր, Ռադիո Ջան, Ռադիո Հայ),
- մայրաքաղաքային սփռում ունեցող 6 հեռուստաընկերություն (Ար, Արմնյուզ, Հ3, 5-րդ ալիք, 21TV, Ա-ԹԻՎԻ) և 7 ռադիոընկերություն (Ռուսակոյե ռադիո, Հայ ՖՄ, Ռադիո Վան, Ռադիո Մարշալ, Լավ ռադիո, Իմպուլս, Փոփ ԷՖ Էմ),
- հանրապետության տարբեր մարզերում գործող տարածքային սփռում ունեցող 14 հեռուստաընկերություն՝ որոնցից 7-ը մարզային սփռում ունեցող (Արարատ, Գեղամա, Ֆորտունա, Կոտայք թիվի, Ցայգ, Ջանգեզուր ՏՎ, Շ1), 7-ը տեղական հեռուստաընկերություններ (ԱԼՏ, Վանաձոր, Միգ, Անկյուն գումարած 3, Լոռի, Հրազդան, Գալա) և 3 ռադիոընկերություն (Շիրակի հանրային, Շանթ ռադիոծրագիր, Միգ ռադիո):

Հանձնաժողովը հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության եթերից օգտվելու հնարավորությունն ավելի մատչելի դարձնելու նպատակով հանրային հեռուստաընկերության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանել է 48 000 դրամ (ներառյալ ԱԱՀ), ի տարբերություն 2017թ. ԱԺ

ընտրությունների, երբ այն սահմանվել էր 60 000 դրամ (ներառյալ ԱԱՀ): Իսկ հանրային ռադիոյի վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը մնացել է անփոփոխ՝ 2000 դրամ (ներառյալ ԱԱՀ):

Այս տեղեկատվությունը 2018թ. նոյեմբերի 10-ին հրապարակվել է Հանձնաժողովի կայքէջում: Հանձնաժողովը համաձայն Հայաստանի Հանրապետության «Ընտրական օրենսգրքի» 20-րդ հոդվածի 10-րդ մասի, մշակել և իր 2018 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 97-Ս որոշմամբ հաստատել և հրապարակել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանություն»-ը:

Հանձնաժողովը 2018թ. նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 9-ը ներառյալ իրականացրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վերգետնյա եթերային հեռարձակմամբ սփռված ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն: Հանձնաժողովը հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հեռարձակած ծրագրերի մշտադիտարկումն իրականացրել է.

- հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) անմիջական դիտարկման արդյունքների,
- գրանցամատյանների և հեռուստառադիոընկերություններից ստացված տեղեկատվության,
- ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և (կամ) նրանց ներկայացուցիչների Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության,
- հեռուստառադիոընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության խախտումների մասին լրատվամիջոցների հրապարակումների,

- պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների Հանձնաժողով ներկայացրած կամ հրապարակած տեղեկատվության ուսումնասիրության հիման վրա:

Հանձնաժողովը ուղղակի դիտարկումը իրականացրել է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից հեռարձակվող ծրագրերի վերահսկման պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

Մշտադիտարկման ամբողջական ծավալն ապահովելու նպատակով Հանձնաժողովը հրավիրել և այդ աշխատանքներում ներգրավել է մասնագիտական լրացուցիչ ռեսուրսներ:

Ի հետևություն մշտադիտարկման արդյունքների կարելի է արձանագրել, որ նախընտրական քարոզչության ընթացքում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը փոփոխության չի ենթարկվել:

Վերգետնյա հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները ըստ սահմանված կարգի 2018թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում Հանձնաժողով տեղեկատվություն են ներկայացրել իրենց կողմից հեռարձակված ծրագրերի մասին: Ստացված տեղեկատվությունը տվյալներ է պարունակել յուրաքանչյուր ընկերության կողմից ընտրությանը մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին:

- անվճար կարգով տրամադրված եթերաժամանակի,
- վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակի,
- նրանց և (կամ) նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ հաղորդումների ընդհանուր տևողության,
- լրատվական ծրագրերում նրանց նախընտրական քարոզչության միջոցառումների լուսաբանման ընդհանուր տևողության վերաբերյալ:

Ստացված տեղեկությունները համադրվել են Հանձնաժողովի ուղղակի դիտարկման արդյունքների հետ, համակարգվել և ամփոփվել են Հանձնաժողովի կողմից կազմված տեղեկանքում, որն օրենքով սահմանված կարգով և ժամկետում՝ 05.12.2018թ., հրապարակվել է Հանձնաժողովի կայքէջում, ինչպես նաև նշված

ժամկետում ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Հանձնաժողովի մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից 26.11.18-07.12.18թթ. ժամանակահատվածում արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին տրամադրված եթերաժամանակի հետևյալ ցուցանիշները.

- անվճար կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է՝ 660 րոպե հանրային ռադիոյի եթերում, 330 րոպե հանրային հեռուստաընկերության եթերում: Ընդ որում նշված ժամանակից իրականում օգտագործվել է 369 րոպե 38 վայրկյան հանրային ռադիոյի եթերում, 317 րոպե 38 վայրկյան հանրային հեռուստաընկերության եթերում,
- վճարովի կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է 12 114 րոպե 33 վայրկյան, այդ թվում ռադիոընկերություններում 2 279 րոպե 13 վայրկյան, հեռուստաընկերություններում 9 835 րոպե 20 վայրկյան,
- հեռուստառադիոընկերությունների հաղորդումներում՝ բացառությամբ լրատվական թողարկումների, ընդհանուր տևողությունը կազմել է 30 057 րոպե, այդ թվում ռադիոընկերություններում 9 772 րոպե, հեռուստաընկերություններում 20 285 րոպե,
- հեռուստառադիոընկերությունների լրատվական թողարկումներում նախընտրական քարոզչության լուսաբանման ընդհանուր տևողությունը կազմել է 16 261 րոպե, այդ թվում ռադիոընկերություններում 2 126 րոպե, հեռուստաընկերություններում 14 135 րոպե,

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի կողմից 2018թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի սակագնի սահմանման և անփոփոխության օրենսդրական պահանջների, ինչպես նաև եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման սկզբունքի խախտումներ չեն արձանագրվել:

Բացի այդ, Հանձնաժողովը 2018թ. նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններից և կուսակցությունների դաշինքներից որևէ բողոք չի ստացել:

Նախընտրական քարոզչությանը վերաբերող դիմում-բողոքներ չեն ստացվել նաև պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, զանգվածային լրատվամիջոցներից և քաղաքացիներից:

Սակայն, Հանձնաժողովը միաժամանակ նշում է նաև, որ 2018թ. դեկտեմբերի 10-ին վարչական վարույթ է հարուցել «Ռադիո Հայ» ընկերության նկատմամբ՝ ՀՀ ընտրական օրենսդրությամբ արգելված ժամանակահատվածում քարոզչական բնույթի հաղորդում հեռարձակելու համար:

Կից բերված աղյուսակում ներկայացված են նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամանակի վերաբերյալ տվյալներ:

Ըստ ներկայացված աղյուսակի կարելի է փաստել, որ առկա է առանձին հեռուստառադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամանակի որոշակի անհամաչափություն:

Հանձնաժողովն իրականացրած ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հանգել է եզրակացության, որ այդ անհամաչափությունը պայմանավորված է կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից իրենց նախընտրական քարոզչության գործընթացների պլանավորման և իրականացման միջոցառումների քանակական, տարածքային և ժամանակացուցային բաշխման տարբերություններով: Այդ տարբերությունները պայմանավորված են նաև կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում առկա միջոցների, անվճար և վճարովի եթերաժամանակի օգտագործման, հեռուստառադիոծրագրերում հյուրընկալվելու պատրաստակամության աստիճանի առանձնահատկություններով:

Այսպիսով, ելնելով վերոնշյալից Հանձնաժողովը հեռուստառադիո-ընկերությունների տրամադրած և կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից օգտագործված եթերաժամանակի արձանագրված անհամաչափությունները որպես հեռուստառադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզարշավին մասնակցող կուսակցությունների և

կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ ապահովելու խախտում չի գնահատում:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում առանձնահատուկ ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքում առաջին անգամ Հայաստանի հանրային հեռուստաընկերության կողմից կազմակերպվեց և բավականին հաջողված ձևով իրականացվեց քաղաքական բանավեճ՝ 2018թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների (ընտրացուցակների առաջին համարները ներկայացված անձանց) միջև, ընդ որում մասնակցելու հրավերն անխտիր ընդունվել էր բոլոր քաղաքական ուժերի կողմից: Դրանով մեր երկրի քաղաքական կյանքում ներմուծվեց նոր, հանրության կողմից հիմնականում դրական գնահատված քաղաքական մշակույթ:

26.11.2018-07.12.2018 ընկած ժամանակահատված

գրանցված կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների անունները	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆԹԱՅ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	72' 55"	0' 00"	1,657' 34"	1,145' 45"	2,803' 19"
«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	87' 58"	1,959' 28"	3,033' 00"	1,561' 21"	4,594' 21"
ԻՄ ՔԱՅԼԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	27' 59"	2,928' 52"	3,964' 43"	1,903' 06"	5,867' 49"
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	72' 57"	1,708' 04"	3,150' 40"	1,574' 17"	4,724' 57"
«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	26' 49"	1,012' 56"	3,203' 24"	1,611' 16"	4,814' 40"
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	85' 00"	2,728' 41"	3,375' 39"	1,654' 54"	5,030' 33"
ՄԵՆՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	84' 29"	701' 01"	2,799' 17"	1,391' 37"	4,190' 54"
«ՍԱՄՆԱ ԾՈՒԵՐ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	87' 58"	229' 50"	2,405' 43"	1,411' 19"	3,817' 02"
«ՔԱՂԱՔԱՑՈՒ ՈՐՈՇՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	69' 14"	176' 12"	2,313' 36"	1,446' 40"	3,760' 16"
« ԶՐԻՍՏՈՆԵԱ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՐԱՃՆՈՒՆԴ » ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	41' 57"	242' 25"	2,046' 29"	1,179' 06"	3,225' 35"
«ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ » ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	30' 00"	427' 04"	2,106' 17"	1,381' 00"	3,487' 17"